կապիտալ
ասեթ
մենեջմենթ

ԿԱՄավոր 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Երևան -2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2015Թ. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 4

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 8

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 9

ՓԱՅԱՏԵՐԵՐԻՆ ՎԵՐԱԳՐԵԼԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 10

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ 11

2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

1. Ներդրումների ամփոփագիր 12
2. Հաշվետու ֆոնդը 13
3. Պատրաստման հիմունքները 15
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն 17
5. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը 24
6. Ռիսկերի կառավարում 29
7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 38
8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ 38
9. Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ 39
10. Տոկոսային եկամուտ 39
11. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ վնաս 40
12. Գործարքներ կառավարչի և այլ կապակցված կողմերի հետ 40
13. Ֆինանսական գործիքների իրական արժեք 40

կապիտալ
ասեթ
մենեջմենթ

ԿԱՄԱՎՈՐ 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն Հայաստանում գրանցված առաջին ներդրումային և կամավոր կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող ընկերությունն է: Ստեղծման օրվանից «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն ներդրումային և կենսաթոշակային գործիքներ է առաջարկում հայաստանյան և արտասահմանյան ներդրողներին: Շուկայում ներկայացված լինելով ԿԱՄ Պետական արժեթղթերի ֆոնդի և երկու կամավոր կենսաթոշակային ֆոնդերի՝ ԿԱՄավոր 1 և ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդերի միջոցով մենք փորձում ենք ներդրողների համար ապահովել բանկային ավանդների և այլ ներդրումային գործիքներին արժանի այլընտրանք:

2013թ. ընթացքում մենք հիմնել ենք երկու կամավոր կենսաթոշակային ֆոնդ: Սակայն կենսաթոշակային ֆոնդերի հայեցակարգը դեռևս նոր է Հայաստանում, բավականաչափ դժվար է հանրային իրազեկվածության մակարդակը բարձրացնել ֆոնդերի գործիքների վերաբերյալ և շուկա հանել դրանք: 2014 թվականի ընթացքում օրենսդրական փոփոխությունների և գործատուների ու կենսաթոշակային պլանների մասնակիցների կողմից կենսաթոշակային ֆոնդերին հատկացումներ անելու պատրաստակամության բացակայության արդյունքում ԿԱՄավոր 1 և ԿԱՄավոր 2 կենսաթոշակային ֆոնդերի համար էական ծավալի ակտիվներ ներգրավել դեռևս չի հաջողվել: Չնայած կառավարվող ակտիվների փոքր ծավալներին, և 2014 թվականի վերջին եռամսյակում ՀՀ ֆինանսական շուկայում արձանագրված էական անկման, որը իր բացասական ազդեցությունը ունեցավ նաև 2015 թվականին ԿԱՄավոր 1-ը և ԿԱՄավոր 2-ը կարողացել են ապահովել եկամտաբերություն 2015 թվականի ընթացքում: ԿԱՄավոր 1-ի եկամտաբերությունը ստեղծման պահից միջին տարեկան եկամտաբերությունները կազմել է 6.57%:

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը Ձեր ուշադրությանն է ներկայացնում ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի 2015թ. գործունեությունը ներկայացնող հաշվետվությունը: Սույն հաշվետվությունը նպատակ ունի ներկայացնել ֆոնդի գործունեության վերաբերյալ ֆինանսական տեղեկատվություն հաշվետու ժամանակաշրջանի համար: Հարցեր կամ մեկնաբանություններ ունենալու դեպքում, խնդրում ենք կապվել մեզ հետ:

Շնորհակալ ենք «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի հանդեպ ցուցաբերած վստահության համար: Մենք պատիվ ենք համարում մեր ջանքերը ձեր կենսաթոշակային ապահովության կարիքներին ծառայեցնելու հնարավորությունը և պլանավորում ենք աշխատել այդ ուղղությամբ նաև ապագայում:

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն,
Ալիկ Առաքելյան

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ

Ներդրումների նպատակայնությունը

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի նպատակը կայուն աճի և եկամտաբերության ապահովումն է բարձրակարգ, կայուն եկամտային արժեթղթերի մեջ ներդրման միջոցով: Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել կայուն եկամտային արժեթղթերում, ներառյալ՝ պետական, կորպորատիվ և համայնքների կողմից թողարկված արժեթղթերում, ինչպես նաև բաժնային արժեթղթերում՝ ֆոնդի 30% ակտիվների չափով: Ֆոնդի ներդրումները կարող են նաև կատարվել բանկային ավանդներում՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերում՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ֆոնդի ակտիվները կարող են նաև ներառել արտասահմանյան արժեթղթեր՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով, ինչպես նաև ներդրումներ արտարժույթով՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով:

Շուկայի նկարագիր

2015 թվականի առաջին կիսամյակում պահպանվեց ՀՀ արժեթղթերի շուկայում 2014թ. տարեվերջին արձանագրված տոկոսադրույքների բարձր մակարդակը, իսկ 2015 թվականի փետրվարի սկզբին նաև շեշտակի աճ: 2015 թվականի երկրորդ կիսամյակում նկատվեց տոկոսադրույքների նվազման կանգ, սակայն ոչ էական: 2015 թվականի առաջին կիսամյակում ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման շրջնակներում ռեպո և լոմբարդային վարկի տոկոսադրույքները շարունակեցին մնալ բարձր մակարդակում:

Որպես ՀՀ պետական արժեթղթերի շուկայի բնութագրիչ կարող ենք վերցնել ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող և հրապարակվող GMI պետական պարտատոմսերի ինդեքսը, որը 2015 թվականի դեկտեմբերին արձանագրել է ընդամենը 7.54% աճ:

ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում պահպանվող բարձր տոկոսադրույքների մակարդակը իր ազդեցությունը թողեց նաև ակտիվների այլ դասերի, մասնավորապես կորպորատիվ արժեթղթերի վրա: Կորպորատիվ արժեթղթերի շուկայում նույնպես արձանագրվեց տոկոսադրույքների որոշակի աճ, ինչն առավել քիչ արտահայտվեց ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դեպքում:

ՀՀ դրամի/ԱՄՆ դոլարի փոխարժեքի տեսանկյունից շուկայում տարածաշրջանային զարգացումների, ՌԴ ֆինանսական շուկայի անկման ազդեցության ներքո 2014 թվականի վերջում ունեցանք ՀՀ դրամի մոտ 15% արժեզրկում, իր բացասական ազդեցությունը թողեց 2015 թվականի ընթացքում ողջ ՀՀ արժեթղթերի շուկայի և մեր կողմից կառավարվող ֆոնդերի եկամտաբերության վրա:

Պորտֆելի նկարագիր

Հաշվի առնելով Կամավոր 1 ֆոնդի երկարաժամկետ ներդրումային հորիզոնը՝ ներդրումային որոշումներ կայացնելիս կիրառվում է «գնել և պահել» (buy-and-hold): Այդ պատճառով 2015թ.-ին ֆոնդի ներդրումային քաղաքականությունը հիմնվեց տարատեսականացման ընդլայման վրա՝ տարվա վերջում ֆոնդում եղած արժեթղթերի թիվը հասցնելով 11-ի: Տարատեսականացումը ուղղվեց ինչպես արժեթղթերի դասի (պետ.պարտատոմս, կորպորատիվ) այնպես էլ փոխարժեքի վրա:

Ֆոնդում եղած փոխարժեքային արժեթղթերը հնարավորություն տվեցին մեղմացնել պետական պարտատոմսերի գների կտրուկ տատանումների ազդեցությունը ֆոնդի եկամտաբերության վրա:

Ներդրումների արդյունքներ

Եկամտաբերության ընդհանուր ցուցանիշներ 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված համար:

	ՄԵԿ ՏԱՐԻ	ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՑ
ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ	6.57%	28.16%

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի հիմանդրման ամսաթիվն է՝ 2013թ. ապրիլ: Համաձայն ֆոնդի կանոնների, Կառավարիչը ֆոնդի հիմնադրումից հետո երեք տարվա ընթացքում պարտավոր է սահմանել և ներկայացնել այն համեմատական ուղենիշը, որի հիման վրա փայատերերը պետք է հնարավորություն ունենան գնահատել ֆոնդի եկամտաբերության մակարդակը՝ համեմատական ուղենիշների հիման վրա: Այդ համեմատական ուղենիշը պետք է սահմանվի՝ հիմք ընդունելով համանման գործիքների (ցուցանիշների) համար գործող չափանիշները՝ հաշվի առնելով ռիսկերի, եկամտաբերության, տարբեր ակտիվների խմբի ժամկետայնությունը: Սույն հաշվետվության ամսաթվի դրությամբ ուղենիշը մշակման փուլում է:

Վերը նշված արդյունքները հիմնված են ակտիվների զուտ արժեքի վրա և ենթադրում են բաշխման ենթակա շահույթի կրկին ներդրում (եթե այդպիսին կա):

Նախկին ցուցանիշները ՉԵՆ նշանակում, որ դրանք շարունակվելու են ապագայում:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարությունը պատասխանատու է ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի (այսուհետև՝ Ֆոնդ կամ ԿԱՄավոր 1) 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և փայատերերին վերագրելի զուտ ակտիվներում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների էության, Ֆոնդի ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ միջոցառումների և դրույթների վերաբերյալ, և
- Ֆոնդի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ֆոնդի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության և ապահովության մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ֆոնդի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ֆոնդի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ֆոնդի ակտիվների անվտանգության ապահովման ուղղությամբ խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից հաստատված են հրապարակման համար 2016թ. ապրիլի 29-ին:

Ստորագրված է ղեկավարության անունից՝

Ալիկ Առաքելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

29 ապրիլի 2016թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» Բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ
Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի փայատերերին

Մեր կողմից իրականացվել է ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, փայատերերին վերագրելի զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման կանոնների և մեթոդների համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2016 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Deloitte.

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
29 ապրիլի, 2016թ.

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի ղեկավար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(հազար դրամ)	Ծան.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	410	1,364
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	1, 8	12,745	9,428
Ընդամենը ակտիվներ		**13,155**	**10,792**
Պարտավորություններ			
Այլ կրեդիտորական պարտք		38	16
Ընդամենը պարտավորություններ (առանց Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների)		**38**	**16**
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ՝ մեկ փայի դիմաց 1,282 դրամ արժեքով 10,235 վճարման ենթակա փայի պայմաններում (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝1,203 դրամ արժեքով 8,961 վճարման ենթակա փայի պայմաններում)	**9**	**13,117**	**10,776**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2016թ. ապրիլի 29-ին:

Ալիկ Առաքելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

12-42 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(հազար դրամ)	Ծան.	2015թ.	2014թ.
Տոկոսային եկամուտ	10	1,229	753
Զուտ վնաս շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	11	(206)	(211)
Ընդամենը գործառնական եկամուտ		**1,023**	**542**
Ներդրումային կառավարման վճարներ	12	(213)	(150)
Պահառուական վճարներ		(18)	(12)
Կոմիսիոն վճարներ		(12)	(7)
Ընդամենը գործառնական ծախսեր		**(243)**	**(169)**
Գործառնական շահույթ		**780**	**373**
Տարվա շահույթ		**780**	**373**
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ		**780**	**373**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2016թ. ապրիլի 29-ին:

Ալիկ Առաքելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

12-42 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՓԱՅԱՏԵՐԵՐԻՆ ՎԵՐԱԳՐԵԼԻ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

(հազար դրամ)	Ծան.	Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ
Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9	**4,156**
Փայատերերի թողարկումներ և մարումներ		
Փայերի թողարկում		6,247
Փայերով գործարքներից զուտ աճ		**6,247**
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում		**373**
Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9	**10,776**
Փայատերերի թողարկումներ և մարումներ		
Փայերի թողարկում		1,655
Փայերի մարում		(94)
Փայերով գործարքներից զուտ աճ		**1,561**
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ տարվա ընթացքում		**780**
Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9	**13,117**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2016թ. ապրիլի 29-ին:

Ալիկ Առաքելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

12-42 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

(հազար դրամ)	Ծան.	2015թ.	2014թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		1,217	720
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների ձեռքբերում		(8,108)	(6,918)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից ստացված միջոցներ		4,584	302
Վճարված գործառնական ծախսեր		(221)	(157)
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		**(2,528)**	**(6,053)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից			
Փայերի թողարկումից ստացված միջոցներ		1,655	6,247
Փայերի մարման գծով վճարված միջոցներ		(81)	-
ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		**1,574**	**6,247**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(954)**	**194**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ		**1,364**	**1,170**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		**-**	**-**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	**7**	**410**	**1,364**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության կողմից 2016թ. ապրիլի 29-ին:

Ալիկ Առաքելյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ, «Էյ-Էն աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

12-42 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներդրումների ամփոփագիր

(հազար դրամ)	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Նկարագրություն	**Անվանական արժեք**	**Իրական արժեք**	**Անվանական արժեք**	**Իրական արժեք**
Հայաստանի Հանրապետության կառավարություն և գերատեսչություններ 48.79%				
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր				
13%, 17/02/2032 կիսամյակային, ՀՀ դրամով	2,000	1,722	1,100	1,052
10%, 29/10/2023, կիսամյակային, ՀՀ դրամով	1,200	931	-	-
12%, 17/02/2021, կիսամյակային, ՀՀ դրամով	-	-	1,200	1,199
10%, 29/04/2020, կիսամյակային, ՀՀ դրամով	1,000	855	-	-
10%, 29/04/2018, կիսամյակային, ՀՀ դրամով	1,500	1,402	1,500	1,453
11%, 29/04/2017, կիսամյակային, ՀՀ դրամով	1,500	1,490	1,500	1,538
Ընդամենը Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր		**6,400**		**5,242**
Ընդամենը Հայաստանի Հանրապետության կառավարություն և գերատեսչություններ		**6,400**		**5,242**
(պետական արժեղթղերի արժեքը՝ 6,763 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,478 հազար դրամ)				
Կորպորատիվ և միջազգային կազմակերպությունների արժեթղթեր - 48,37%				
Ֆինանսական ծառայություններ				
Անվանական արժեքը՝ 25 ԱՄՆ դոլար, 8%, 10/06/2018, կիսամյակային «Արարատբանկ»	2,375 ԱՄՆ դոլար	1,173	-	-
Անվանական արժեքը՝ 100,000 ՀՀ դրամ, 10%, 22/04/2017, կիսամյակային Ազգային հիփոթեքային ընկերություն	1,100	1,080	900	937
Անվանական արժեքը՝ 1,000 ԱՄՆ դոլար, 7.5%, 16/04/2018, կիսամյակային Արմսվիսբանկ	2,000 ԱՄՆ դոլար	989	-	-
Անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար, 9.5%, 17/11/2017, կիսամյակային Գլոբալ Կրեդիտ	2,000 ԱՄՆ դոլար	978	-	-
Անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ, 9.7%, 23/12/2016, կիսամյակային Միջազգային ֆինանսական կորպորացիա	1,000	984	700	685
Անվանական արժեքը՝ 10,000 ՀՀ դրամ, 6-ամսյա-ՀՀ դրամ-գանձապետական պարտատոմսեր+0.3%, 31.01.2015թ. կիսամյակային ՎՀԵԲ	-	-	850	878
Անվանական արժեքը՝ 25 ԱՄՆ դոլար, 9%, 20/10/2015, կիսամյակային «Արարատբանկ»	-	-	1,225 ԱՄՆ դոլար	597
Ընդամենը ֆինանսական ծառայություններ		**5,204**		**3,097**
Շինանյութեր և առևտուր՝ **Անվանական արժեքը 100 ԱՄՆ դոլար, 11%, 20/11/2018, կիսամյակային** «Շեն Հոլդինգ»	2,300 ԱՄՆ դոլար	1,141	2,200 ԱՄՆ դոլար	1,089
Ընդամենը՝ շինանյութեր և առևտուր		**1,141**		**1,089**
Ընդամենը՝ կորպորատիվ և միջազգային կազմակերպությունների արժեթղթեր		**6,345**		**4,186**
Կորպորատիվ և միջազգային կազմակերպությունների արժեթղթեր՝ 6,386 հազար դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4,387 հազար դրամ)				
Ընդամենը՝ ներդրումներ - 97.16% (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 87.50%)		**12,745**		**9,428**
Պարտավորությունները գերազանցող այլ ակտիվներ — 2.84% (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12.50%)		**372**		**1,348**
Զուտ ակտիվներ՝ 100.0%		**13,117**		**10,776**

2. Հաշվետու ֆոնդը

ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդը (այսուհետև՝ ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդ, կամ ԿԱՄավոր 1, կամ ֆոնդ) իրենից ներկայացնում է բաց պայմանագրային ներդրումային ֆոնդ: Ֆոնդը հիմնադրվել է 2013թ. ապրիլի 30-ին՝ անսահմանափակ ժամկետով, որպես բաց ներդրումային ընկերություն համաձայն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրության, ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) թիվ 123-Ա որոշմամբ:

Ֆոնդի գրանցման հասցեն է՝ Խորենացու 15, 5-րդ սենյակ, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

Ֆոնդերի ներդրումային նպատակն է՝ հասնել կայուն միջնաժամկետ եկամտաբերության՝ միևնույն ժամանակ ապահովելով կապիտալի անվտանգությունը այն ներդնելով դիվերսիֆիկացված կապիտալի արժեթղթերի, տոկոսակիր արժեթղթերի և այլ ածանցյալ գործիքների պորտֆելում՝ մի քանի արժույթներով: Ֆոնդի ակտիվները ներդրվում են բացառապես ՀՀ և օրենքով սահմանված օտարերկրյա պետություններում գործող ֆոնդային բորսաներում ցուցակված արժեթղթերում:

Ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել կայուն եկամտային արժեթղթերում, ներառյալ՝ պետական, կորպորատիվ և համայնքների կողմից թողարկված արժեթղթերում, ինչպես նաև բաժնային արժեթղթերում՝ ֆոնդի 30% ակտիվների չափով: Ֆոնդի ներդրումները կարող են նաև կատարվել բանկային ավանդներում՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով, ինչպես նաև ներդրումային ֆոնդերի փայերում ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով: Բացի այդ, ֆոնդի ակտիվները կարող են ներդրվել ածանցյալ գործիքներում՝ միայն հեջավորման նպատակով: Ֆոնդի ակտիվները կարող են նաև ներառել արտասահմանյան արժեթղթեր՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով, ինչպես նաև ներդրումներ արտարժույթով՝ ֆոնդի ակտիվների մինչև 50%-ի չափով:

Ֆոնդի փայերը ենթակա են մարման՝ դրանց տնօրինողի հայեցողությամբ, պայմանով որ, դրանք կպահվեն նվազագույնը երկու տարի ժամկետով: Փայերը չեն կարող գնվել/վաճառվել արժեթղթերի շուկայում:

Ֆոնդի ներդրումային գործունեությունը կառավարվում է «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (այսուհետ՝ «Կառավարիչ») կողմից, որը հիմնադրվել է 2012 հոկտեմբերի 18-ին և գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ՝ ստանալով թիվ 1 լիցենզիան: Կառավարիչը պատասխանատու է ֆոնդի, ներդրումների կառավարման և փայատերերի/մասնակիցների հաշվառման համար: Կառավարիչը ֆոնդի հաշվապահությունն իրականացնելու համար ներգրավել է «Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ ընկերությանը, իսկ ֆոնդի պահառու՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին: «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն հանդիսանում է պրն. Տիգրան Կարապետյանի վերջնական վերահսկողության տակ գտնվող «Կապիտալ Ինվեսթմենթս» ՓԲԸ-ի դուստր ընկերություն:

Գործարար միջավայրը

Կարգավորող մարմինները վերահսկում են Ֆոնդի և Կառավարչի գործունեության տարաբնույթ ոլորտները, և կարող են իրականացնել ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառույթները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի

ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

Հայաստանի գործարար միջավայրը

Ֆոնդն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Ֆոնդի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Զարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում զանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները, այդ թվում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերի: Երկրի ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները:

Հայաստանը դեռևս գտնվում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների գործընթացում: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը: Ի լրումն, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեության ծավալները, ինչը թերևս չի արտացոլում ֆինանսական գործիքների արժեքները: ՀՀ ապագա տնտեսական ուղղվածությունը մեծապես կախված է կառավարության կողմից ձեռնարկված տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումներից, ինչպես նաև հարկային, իրավական, կանոնակարգային և քաղաքական զարգացումներից:

Ֆոնդի ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, կորպորատիվ արժեթղթերի շուկայում, կանոնակարգային դաշտում և աշխարհաքաղաքական այլ փոփոխությունները, որոնք բոլորն էլ դեր ունեն ակտիվների գնահատման, թրեյդինգային գործունեության, տոկոսադրույքների, ներդրողների ընդհանուր տրամադրվածության նկատմամբ և դուրս են Ֆոնդի վերահսկողությունից: Վարկային շուկաների իրադրության վատթարացումը, կարճաժամկետ տոկոսադրույքների և արժեթղթերի գնահատումներում նվազումները բացասական ազդեցություն ունեն փայատերերին վերագրելի զուտ ակտիվների արժեքի վրա:

Անբարենպաստ փոփոխությունները, որոնք առաջանում են համաշխարհային ֆինանսական համակարգի ռիսկերից, այդ թվում՝ վարկային միջավայրի ցանկացած լճացումը կարող է դանդաղեցնել կամ խոչընդոտել Հայաստանի Հանրապետության տնտեսությունը: Ավելին, դեռևս առկա են անորոշություններ՝ կապված երկրների տնտեսական իրավիճակի հետ, որը կարող է հանգեցնել արտասահմանից ներհոսող դրամական միջոցների պակասորդի, ինչպես նաև հանքարդյունաբերական արտադրանքի գների անկման, որը մեծապես որոշիչ դեր է խաղում ՀՀ տնտեսության համար: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Ֆոնդի գործունեությունը կարող են վատթարանալ:

ՀՀ դրամի արժեզրկումը սկսվել է 2014թ. նոյեմբերին և շարունակվել է 2014թ. դեկտեմբերի ընթացքում: 2015թ. ՀՀ դրամի հետագա արժեզրկումը կանգ է առել և շուկան մեծ տատանումների չի ենթարկվել: Փաստացիորեն, ՀՀ դրամն անգամ փոքր-ինչ արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ:

ՀՀ դրամի արժեզրկումը կախված է մի շարք գործոններից ինչպիսիք են՝ գլոբալ տնտեսական զարգացումները, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում դիտվող աճի պայմաններում ԱՄՆ դոլարի արժևորումն այլ զարգացող և զարգացած երկրների արժույթների համեմատ: ԱՊՀ երկրներում իրավիճակը էլ ավելի են բարդացնում աշխարհաքաղաքական խնդիրները և նավթի գների անկումը: Այս գործոնները հանգեցրել են տնտեսական աճի կտրուկ անկման Ռուսաստանում և ազգային արժույթի արժեզրկման: Սա իր հերթին մեծացրել է ճնշումը ԱՊՀ տարածաշրջանում, ինչի արդյունքում կրճատվել են արտահանման և փոխանցումների արդյունքում դոլարային ներհոսքերը:

Ղեկավարության համոզմամբ, իրենց կողմից ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցառումները Ընկերության կայուն զարգացումն ապահովելու ուղղությամբ: Կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ղեկավարության գնահատականները ներկայիս բիզնես միջավայրի՝ կատարողական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ: Այնուամենայնիվ, քանի որ նման ենթադրությունների հիմքում ընկած են բազմաթիվ փոփոխական պայմաններ և անորոշություններ, ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա: Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում այն ճշգրտումների ազդեցությունը, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե վերը նշված հանգամանքները դիտարկելի և արժանահավատորեն չափելի լինեին Հայաստանի Հանրապետությունում:

3. Պատրաստման հիմունքները

ա. Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

բ. Պատրաստման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ֆոնդը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշակի ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Ֆոնդը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցներն այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով:

Ի լրումն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝

իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք ֆոնդին հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալներն իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի ելակետային տվյալները:

Ֆոնդն իր հաշվապահական հաշվառումն իրականացնում է ՀՀ օրենսդրության համաձայն: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվապահական գրառումների հիման վրա և ճշգրտվել են՝ ՖՀՄՍ համապատասխանություն ապահովելու համար:

Ֆոնդն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 6-ում:

գ. Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ֆոնդն իրականանցում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Ֆոնդի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ): Բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

դ. Հարկում

Ֆոնդը համարվում է կենսաթոշակային ֆոնդ և ՀՀ հարկային օրենսդրության համաձայն ազատված է շահութահարկից, այսինքն՝ շահութահարկի գծով պահուստի անհրաժեշտություն չկա: Ֆոնդի փայատերերից յուրաքանչյուրն առանձին պատասխանատվություն է կրում ֆոնդից ստացված իր եկամուտների մասով:

ե. Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

զ. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և

ծախսի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում: Դատողությունները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գործիքներին: Իրական արժեքի լավագույն վկայություն է հանդիսանում դրա գինը ակտիվ շուկայում: Շուկայում գնի բացակայության դեպքում ֆոնդն օգտագործում է այլ գնահատման տեխնիկաներ, մասնավորապես՝ թե՛ արտաքին և թե՛ ներքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը: Իրական արժեքի չափումները ներկայացված են ծանոթագրություն 13-ում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

ա. Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժութային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

բ. Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի

համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը:

Ֆոնդն արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկման ժամանակ գնահատում է ապագա դրամական հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքների բոլոր պայմանագրային պայմանները, բայց ոչ ապագա պարտքային կորուստները: Ստացված կամ ստացվելիք տոկոսները, վճարված կամ վճարվելիք տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում, համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

գ. Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցոցով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտաժույթի փոխարժեքային տարբերությունները, սակայն չի ներառում տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը:

դ. Ծախսեր

Բոլոր ծախսերը, ինչպես նաև կառավարչի ծախսերը և վճարները կապված ԿԱՄավոր 1 կենսաթոշակային ֆոնդի գծով պարտականությունների իրականացման հետ կարող են ծախսագրվել ֆոնդին:

Ֆոնդից գանձվող կառավարման միջնորդավճարը կազմում է զուտ ակտիվների տարեկան 1.8%-ը:

ե. Կոմիսիոն ծախսեր

Կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համաապատասխան ծառայությունների կատարումից հետո:

զ. Ֆինանսական գործիքներ

Ֆոնդը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ դ) վարկեր և դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ֆոնդի կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ֆոնդի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում

ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տե՛ս ծանոթագրություն 13):

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ. մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով ֆոնդն ունի մինչ մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե ֆոնդը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակազրկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, ֆոնդին կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ՝ գ) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ:

Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով: Իրական արժեքի փոփոխությունից օգուտը և վնասները ճանաչվում են այլ համապարփակ եկամտում և կուտակվում են ներդրումների վերագնահատման պահուստում, բացառությամբ ոչ ժամանակավոր արժեզրկման կորուստների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի, շահաբաժինների տեսքով եկամտի, դրամային ակտիվների դեպքում՝ արտարժույթի փոխարկումից օգուտի և վնասի, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: Այն դեպքում երբ ներդրումն օտարվում է կամ համարվում է արժեզրկված, նախկինում ներդրումների վերագնահատման պահուստում կուտակված օգուտը կամ վնասը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր. առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե ֆոնդը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ

էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ֆոնդը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ֆոնդը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ֆոնդը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Եթե Ֆոնդի շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ֆոնդը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ֆոնդը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ֆոնդի Կառավարչի կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության

փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ֆոնդն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ֆոնդի պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Է. Մարման ենթակա փայեր և մարման ենթակա փայերի փայատերերին վերագրվող զուտ ակտիվներ

Ֆոնդն առաջարկում է փայերի մեկ դաս, որոնք ստորադասված են Ֆոնդի պարտավորություններին, բոլոր էական առումներով հավասարազոր են և ունեն միևնույն պայմանները: Մարման ենթակա փայերը ցանկացած պահի կարող են վերադարձվել Ֆոնդին կանխիկացման նպատակով, պայմանով, որ դրանք կպահվեն առնվազն երկու տարի ժամկետով, և դրանք հավասար են Ֆոնդի՝ փային վերագրելի ակտիվի զուտ արժեքի համամասնական չափին: Մարման ենթակա փայերը դասակարգվում են սեփական կապիտալում և չափվում են մարման մեծության չափով:

Մարման ենթակա փայերը թողարկվում և մարվում են հիմք ընդունելով մեկ փայի դիմաց Ֆոնդի սահմանած զուտ ակտիվի արժեքը՝ հաշվարկված Ֆոնդի զուտ ակտիվների բաժանման եղանակով, համաձայն Ֆոնդի կանոնների (որոնք համապատասխանում են ՖՀՄՍ պահանջներին): Թողարկված և մարված փայերի դիմաց ստացված հասույթը և կատարված վճարումները հաշվառվում են որպես շարժ փայատերերին վերագրելի զուտ ակտիվների փոփոխության մասին հաշվետվությունում:

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը որոշվում է յուրաքանչյուր Ֆոնդին վերաբերող Կանոնների փաստաթղթերում սահմանված պահին՝ յուրաքանչյուր գործառնական օր («Գնահատման ամսաթիվ») և ցանկացած այլ ամսաթվի դրությամբ, ինչպես կարող է անհրաժեշտ համարվել Կառավարչի կամ նրա կողմից նշանակված անձի կողմից:

Ը. Բաշխումներ փայատերերին

Կառավարչի նպատակն է՝ Ֆոնդի եկամուտը չբաշխել փայատերերին, այլ վերստին ներդնել Ֆոնդում:

5. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

Փոփոխություններ ՖՀՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա. Ընթացիկ տարում ընդունվել/վերանայվել են հետևյալ Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Այս նոր Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները էական ազդեցություն չեն ունեցել սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 ցիկլ
- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 ցիկլ

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 ցիկլ. ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. ցիկլը ներառում է մի շարք ՖՀՄՍ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացության սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք՝ համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն:

ՖՀՄՍ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի Հիմնադրամը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեգմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեգմենտի ընդհանուր ակտիվների համեմատագրումը հաշվետու ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեգմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմնին:

ՖՀՄՍ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՀՄՍ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՀՀՄՍ 39-ում և ՖՀՄՍ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-ապրանքագրային արժեքով և առանց զեղչման չափման հնարավորության կասեցման, եթե զեղչման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

ՀՀՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

Ֆոնդի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 ցիկլ. 2011-2013 ցիկլի ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի զուտ հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի:

ՀՀՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 40-ը և ՖՀՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՀՄՍ 3-ի:

Ֆոնդի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունները էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ֆոնդը չի իրականացրել որևէ հրապարակված սակայն դեռևս չգործող ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառություն:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Ֆոնդը չի իրականացրել հրապարակված, սակայն դեռևս չգործող հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ների վաղ կիրառում:

• ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ	Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:
• Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնություն • Փոփոխություններ ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում. Ներդրումային ընկերություններ. Համախմբման բացառությունների կիրառումը: • ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014թթ. ցիկլ	Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ: 2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՀՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՀՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև՝ 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, ինչպես նաև ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ: ՖՀՄՍ 9 նպատակ ունի փոխարինելու ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը ստանդարտին:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը:** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ բիզնես մոդելի, որով դրանք պահվում են, ինչպես նաև ըստ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի բնութագրերի: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով:

  ՖՀՄՍ9-ի 2014թ. տարբերակը ներկայացնում է «իրական արժեք այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով» հասկացությունը բիզնես մոդելում պահվող պարտքային գործիքների մասով, որոնց նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման և թե ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով, և որոնք ունեն ֆինանսական ակտիվին բնորոշ պայմանագրային պայմաններ, ըստ որոնց առաջանում են դրամական հոսքերի որոշակի ժամկետներ, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա վրա կուտակված տոկոսի մարում՝ չափվող սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են անփոփոխ որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով)

ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:

- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը:** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են նույն կերպ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն, սակայն առկա են տարբերություններ կապված Ընկերության սեփական վարկային ռիսկի չափմանը վերաբերող պահանջների հետ: ՖՀՄՍ 9-ով պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող՝ իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում:

- **Արժեզրկում:** ՖՀՄՍ9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսկան ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեգրված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:

- **Հեջավորման հաշվառում:** Ներկայացնում է հեջավորման հաշվառման նոր մոդել, որը նպատակ ունի սերտ համապատասխանություն ապահովել կազմակերպությունների կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի հեջավորման ընթացքում գործադրվող ռիսկերի կառավարման գործընթացներին: Ըստ ՖՀՄՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև Ընկերության ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:

- **Ապաճանաչում:** Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչման պահանջները շարունակելու են գործել ըստ ՀՀՄՍ 39-ի:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՖՀՄՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

Ֆոնդի ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական

պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՖՀՄՍ 9-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում: Բացահայտման նախաձեռնություն. ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները պարզաբանում են էականություն հասկացության գործնական կիրառման սկզբունքը: Այս փոփոխությունները գործում են 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար: Ֆոնդի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում. Ներդրումային ընկերություններ. Համախմբման բացառությունների կիրառումը: ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտների փոփոխությունները պարզաբանում են, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գծով բացառություններ կարող են տրամադրվել մայր ընկերությանը, որը հանդիսանում է ներդրումային ընկերության դուստր ընկերություն, անգամ եթե ներդրումային ընկերությունը իր բոլոր դուստր ընկերությունները չափում է իրական արժեքով՝ համաձայն ՖՀՄՍ 10-ի: Փոփոխություններով նաև պարզաբանվում է, որ ներդրումային ընկերությանը վերջինիս ներդրումային գործունեության հետ կապված ծառայություններ մատուցող դուստր ընկերության համախմբման պահանջը ներդրումային ընկերության համար կիրառելի է միայն այն դուստր ընկերությունների մասով որոնք ինքնին ներդրումային ընկերություն չեն հանդիսանում:

Ֆոնդի ղեկավարությունը չի ակնկալում, որ ՖՀՄՍ 10, ՖՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտների փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ֆոնդը ներդրումային ընկերություն չէ և չունի հոլդինգային ընկերություն, դուստր կամ ասոցիացված ընկերություն, որը կհամապատասխաներ ներդրումային ընկերության չափանիշներին:

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 ցիկլ: 2012-2014 ցիկլի ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները լրացուցիչ պարզաբանում են, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն՝ փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՖՀՄՍ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ

ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՀՀՄՍ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների զեղչատոկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՀՀՄՍ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ֆոնդի ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

6. Ռիսկերի կառավարում

Ֆոնդի գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, վարկային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և վարկանիշային ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր է խաղում Կառավարչի և Ֆոնդի հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի հավանականությունը Կառավարչի և Ֆոնդի համար, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Կառավարիչն ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում, ինչպես նաև ունի սահմանած քաղաքականություններ և ընթացակարգեր, համաձայն որոնց տարբեր ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնող միավորներ պատասխանատու են զանազան ռիսկերի հայտնաբերման, չափման և վերահսկողության իրականացման համար: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Կառավարչի գործադիր մարմինը, որը պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

- վարկային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով,
- տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները,

- ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները, որտեղ ֆոնդը և նրա պրինցիպալները հանդես են գալիս որպես ներդրումային կառավարիչներ,
- գործառնական ռիսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը, խափանմանը կամ արտաքին միջադեպերի, հարաբերությունների (մատակարարներ, գործընկերներ) գծով առաջանալիք ռիսկերին:

Կառավարչի կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև զանազան գործընկերներիի հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, ոլորտի կանոնակարգերի և էթիկայի կանոնների պահպանման հարցերին, ինչպես նաև կարգավորվում են աշխատակիցների և խորհրդատուների վարքագծի կանոնները:

Կառավարչի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Հետևաբար, չնայած ռիսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ Կառավարիչը և ֆոնդը կարող են անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ ռիսկերի առաջացման արդյունքում:

ա. Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերն այն ռիսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է ֆոնդը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական ռիսկն իրենից ներկայացնում է շուկայական ռիսկը (ներառյալ՝ տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի ռիսկը և այլ գնային ռիսկերը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը): Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է՝ սահմանել ռիսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ ռիսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:

ֆոնդը կարող է պահպանել ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների տարբեր դիրքեր՝ համաձայն իր ներդրումային կառավարման ռազմավարության: ֆոնդի կանոններում սահմանված են ներդրումային քաղաքականությունը և ուղղությունները, որոնք ամփոփում է ֆոնդի ընդհանուր ռազմավարությունը, ռիսկի դիմելու ցանկությունը և ընդհանուր ռիսկերի կառավարման փիլիսոփայությունը: ֆոնդի ներդրումային պորտֆելի սահմանափակումները կարգավորված են նաև ՀՀ ԿԲ խորհրդի 06 դեկտեմբերի 2011թ. թիվ 337-Ն որոշմամբ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը կորստի ռիսկն է, որ կարող է առաջանալ փոխառուի, ապահովագրողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում: ֆոնդը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: ֆոնդը փորձում է կառավարել իր վարկային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: ֆոնդը կարող է կատարել ֆինանսավորման ապահով գործարքներ, մասնավորապես՝ վաճառքի և հետգնման պայմանագրեր (ռեպո պայմանագրեր), կամ գնման և վերավաճառքի պայմանագրեր (հակադարձ հետգնման պայմանագրեր)՝ ֆոնդի ակտիվների մինչև 10% չափով: Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրերը,

ֆոնդին թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Կառավարիչը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության համար և պատասխանատու է ֆոնդի վարկային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի գնահատում, վարկային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկային ռեյտինգի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Ղեկավարությունը չունի ներքին վարկանշման համակարգ և վարկային ռիսկը կառավարելու նպատակով կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը, սահմանում է իր ռիսկի ախորժակը՝ կիրառելով, ի թիվս այլ միջոցների, սահմանափակումների քաղաքականություն, խոշոր գործարքների գծով սահմանելով հաստատումների մեխանիզմ:
2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

(հազար դրամ)	**2015թ. դեկտեմբերի 31**	**2014թ. դեկտեմբերի 31**		
	Հաշվեկշռային արժեք	**Հաշվեկշռային արժեք**	**Երկիր**	**Վարկանիշ**
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	410	1,364	Հայաստան	Չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
ՀՀ պետական արժեթղթեր	6,400	5,242	Հայաստան	Չվարկանշված
Կորպորատիվ արժեթղթեր, արտադրություն	1,141	1,089	Հայաստան	C- ՀՀ ԿԲ վարկանիշ
Կորպորատիվ արժեթղթեր, ֆինանսական ծառայություններ	5,204	3,097	Հայաստան	Չվարկանշված
	13,155	**10,792**	**-**	**-**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են մեկ ֆինանսական կազմակերպությունում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ 3% (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13%) կենտրոնացմամբ զուտ ակտիվների նկատմամբ: Ֆոնդի ֆինանսական կատարողական արդյունքները վերահսկվում են եռամսյակային կտրվածքով կամ ավելի հաճախակի, ըստ անհրաժեշտության, Կառավարչի կողմից ֆինանսական ռիսկի կառավարման գործընթացների շրջանակներում:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ՀՀ տարածքում գտնվող գործարքային կողմերի հետ են, և ֆինանսական ակտիվներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ ֆոնդը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Ֆոնդը իրացվելիության լրացուցիչ մակարդակ է ապահովում՝ օվերնայթ կանխիկ միջոցներով և կարճաժամկետ ներդրումներով, դրանով իսկ ապահովելով օրական ֆինանսավորման կարիքները և զուտ ակտիվների աճը փայատերերի համար: Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների

համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Ֆոնդի քաղաքականությունը և ներդրումային կառավարչի մոտեցումը իրացվելիության կառավարմանը կայանում է նրանում, որպեսզի Ֆոնդը ունենա բավարար իրացվելիություն պատրավորությունների կատարման, ներառյալ՝ փայերի մարման համար, թե ընթացիկ, և թե սթրեսային իրավիճակներում՝ առանց Ֆոնդի վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

Ըստ կանոնների, Ֆոնդը պարտավոր է մարել փայերը (օրենքով սահմանված կարգով) համապատասխան ծանուցում ստանալուց հետո երեք օրվա ընթացքում: Համապատասխանաբար, իրացվելիություն ապահովելու համար Ֆոնդը հաշվի է առնում արդեն իսկ ստացված և ակնկալվող փայերի մարման ծանուցումները:

Ֆոնդը չի պահում կանխիկ միջոցներ՝ բոլոր այդ պահանջները բավարարելու համար, քանի որ փորձը ցույց է տալիս, որ մարման տեմպերը կարող են կանխատեսվել ողջամիտ մակարդակով, և ղեկավարությունը կարծում է, որ Ֆոնդի ակտիվները բարձր իրացվելի են և կարող են վաճառվել ըստ պահանջի՝ ապահովելու համար ֆինանսական պարտավորությունների գծով կանխիկի արտահոսքերը:

Ստորև ներկայացված աղյուսակում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են զեղչված հիմունքով: Ըստ ղեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ ղեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից: Ղեկավարությունը տնօրինում է արժեթղթերի պորտֆել, որն իրացվելի է և կարող է օգտագործվել ֆինանսական պարտավորությունների և փայերի մարման արտահոսքերն ապահովելու համար:

(հազար դրամ)	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**					
	Հաշվե-կշռային արժեք	**Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով**	**1-ից 6 ամիս**	**6-ից 12 ամիս**	**1-ից 5 տարի**	**Ավելի քան 5 տարի**
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	410	410	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	12,745	12,745	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**13,155**	**13,155**	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Այլ կրեդիտորական պարտք	38	38	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**38**	**38**	**-**	**-**	**-**	**-**
Զուտ ակտիվներ	**13,117**	**13,117**	-	-	-	-

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ					
	Հաշվե-կշռային արժեք	Ցպահանջ և մինչև 1 ամիս ժամկետով	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,364	1,364	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	9,428	9,428	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**10,792**	**10,792**	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ						
Այլ կրեդիտորական պարտք	16	16	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**16**	**16**	**-**	**-**	**-**	**-**
Զուտ ակտիվներ	**10,776**	**10,776**	-	-	-	-

Ինչ վերաբերում է փայատերերին վերագրելի զուտ ակտիվներին, 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, փայատերերն իրավունք ունեն ցանկացած աշխատանքային օր պահանջելու այն փայերի մարումը, որոնց ձեռքբերումից հետո լրացել է 2 տարվա ժամկետը և Ֆոնդը պարտավոր է նման պահանջը բավարարել 3 օրվա ընթացքում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները կազդեն Ֆոնդի եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը: Ֆոնդի կառավարիչն իրականացնում է իր ներդրումային գույքի կառավարում ըստ գործիքների և օրական կտրվածքով:

Տոկոսադրույքի ռիսկ

Ֆոնդին բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ֆոնդի տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ֆոնդի քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են Ֆոնդի փայատերերի տարիքային խմբին և փայերի մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսաբեր ակտիվները ֆինանսավորվում են առաջին հերթին Ֆոնդին բաժանորդագրվելու միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են ոչ տոկոսակիր ֆինանսավորման աղբյուրներ: Տոկոսային եկամտի վրա կարող են ազդեցություն ունենալ այդ ակտիվների ծավալի և համադրության, ինչպես նաև տոկոսադրույքների և պորտֆելի կառավարման ռազմավարության տատանումները: Երբ տեղի է ունենում տոկոսադրույքների անկում, Կառավարիչը կարող է փորձել մեղմել այդ անկման բացասական ազդեցությունը՝ ավելացնելով ներդրումային պորտֆելում ակտիվների մարման ժամկետները՝ ակտիվի եկամտաբերությունը անփոփոխ թողնելու

նպատակով: Ստորև ներկայացված է 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքի միջակայքի դիրքը ֆինանսական գործիքների գծով:

(հազար դրամ)	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Հաշվե-կշռային արժեք	1 ամսից պակաս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա-կիր
Ֆինանսական ակտիվներ							
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	410	410	-	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	12,745	12,745	-	-	-	-	-
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ							
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-	-	
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	13,155	13,155	-	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ							
Ոչ տոկոսակիր գործիքներ							
Այլ պարտավորություններ	38	-	-	-	-	-	38
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	38	-	-	-	-	-	38
Զուտ դիրք	13,117	13,155	-	-	-	-	(38)

(հազար դրամ)	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						
	Հաշվե-կշռային արժեք	1 ամսից պակաս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ոչ տոկոսա-կիր
Ֆինանսական ակտիվներ							
Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,364	1,364	-	-	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	8,550	8,550	-	-	-	-	-
Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ							
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	878	878	-	-	-	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**10,792**	**10,792**	-	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ							
Ոչ տոկոսակիր գործիքներ							
Այլ պարտավորություններ	16	-	-	-	-	-	16
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**16**	-	-	-	-	-	**16**
Զուտ դիրք	**10,776**	**10,792**	-	-	-	-	**(16)**

Քանի որ Ֆոնդի ֆինանսական գործիքների գծով դրամական միջոցների հոսքերից որևէ մեկը 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված չէ լողացող տոկոսադրույքի, Ֆոնդը չի

պատրաստում և ներկայացնում տոկոսադրույքի ռիսկի զգայունության վերլուծություն, քանի որ այս առումով առկա չէ ազդեցություն շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են միջին տոկոսադրույքները տոկոսակիր գործիքների գծով՝ հիմք ընդունելով Կառավարչի վերանայած հաշվետվությունները: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների ժամկետայնությունից ելնելով դրանց եկամտաբերության մոտավոր պատկերը՝

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Տարեկան % արտահայտությամբ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ	12.32%	9.03%	11.39%	10.29%
Տոկոսակիր պարտավորություններ	-	-	-	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք ֆոնդի գործառնական արժույթով չեն պահվում: Կառավարիչն ունի սահմանված քաղաքականություն՝ ֆոնդի վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը կառավարելու համար՝ ֆոնդի կանոններում սահմանված արտարժույթի դիվերսիֆիկացման պայմանների համաձայն: Հաշվետու ամսաթվի դրությամբ ֆոնդի վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը պայմանավորված է ԱՄՆ դոլարով գնանշված կորպորատիվ արժեթղթերով, որոնք առկա են ներդրումային պորտֆելում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

(հազար դրամ)	**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**		
	ՀՀ դրամով	**ԱՄՆ դոլարով**	**Ընդամենը**
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	410	-	410
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	8,464	4,281	12,745
	8,874	**4,281**	**13,155**
Պարտավորություններ			
Պարտավորություններ՝ առանց փայատերերին վերագրելի զուտ ակտիվների	(38)	-	(38)
Հաշվեկշռային բաց դիրք	**8,836**	**4,281**	**13,117**

(հազար դրամ)	**2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**		
	ՀՀ դրամով	**ԱՄՆ դոլարով**	**Ընդամենը**
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,364	-	1,364
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	7,742	1,686	9,428
	9,106	**1,686**	**10,792**
Պարտավորություններ			
Պարտավորություններ՝ առանց փայատերերին վերագրելի զուտ ակտիվների	(16)	-	(16)
Հաշվեկշռային բաց դիրք	**9,090**	**1,686**	**10,776**

2015թ. դեկտեմբերի 31-ին ՀՀ դրամի արժևորումը կամ արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ, ինչպես ներկայացված է ստորև՝ կհանգեցներ զուտ ակտիվների աճի (նվազման) և շահույթի կամ վնասի, ստորև նշված գումարների չափով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթի փոխարժեքի տատանումների վրա որոնք ֆոնդի ողջամիտ գնահատմամբ համարվել են հնարավոր

հաշվետու ամսաթվի դրությամբ: Վերլուծությունը ենթադրում է, որ բոլոր մնացած փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, մնում են անփոփոխ:

(հազար դրամ)	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Արժեզրկում Շահույթ կամ վնաս / փայատերերին	Արժևորում վերագրելի զուտ ակտիվներ	Արժեզրկում Շահույթ կամ վնաս / փայատերերին	Արժևորում վերագրելի զուտ ակտիվներ
10% ԱՄՆ դոլարի շարժ	428	(428)	169	(169)

Այլ գնային ռիսկեր

Բաժնային արժեթղթերի գնային ռիսկ: Բաժնային արժեթղթերի գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կարող է փոփոխվել շուկայական գների փոփոխության արդյունքում՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանք առաջացել են որոշակի գործիքին բնորոշ գործոնների ազդեցության, թե շուկայում վաճառվող բոլոր գործիքների վրա ազդեցություն ունեցող գործոնների հետևանքով: Բաժնային արժեթղթերի գնային ռիսկն առկա է այն դեպքում, երբ ֆոնդն ունի սեփական կապիտալի ֆինանսական գործիքում երկար կամ կարճ դիրք: Հաշվետու ամսաթվի դրությամբ ֆոնդն իր տնօրինության տակ չուներ բաժնային արժեթղթեր:

ա. Գործառնական ռիսկի կառավարում

Ֆոնդի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է ֆոնդի կառավարիչը, որի կառավարման համար նա առաջնորդվում է ընդհանուր ստանդարտներով, ինչը ներառում է վերահսկողություն բիզնես գործընթացների նկատմամբ:

բ.Կապիտալի ռիսկի կառավարում

Ֆոնդի կապիտալը ներկայացված է փայատերերին վերագրելի զուտ ակտիվներով: Ֆոնդը փորձում է ներդրումների բաժանորդագրումները ներդնել այնպես, որ ապահովի ֆոնդի ներդրումային նպատակների իրականացումը՝ միևնույն ժամանակ պահպանելով բավարար իրացվելիությունը փայատերերի մարումներն ապահովելու համար: Ղեկավարությունը կարող է մարել և թողարկել նոր փայեր՝ ֆոնդի հիմնադիր փաստաթղթերի համաձայն:

գ. Ոչ ֆինանսական ռիսկերի կառավարում

Տեխնոլոգիական և գործառնական ռիսկեր: Կառավարիչը և, համապատասխանաբար՝ ֆոնդը, ենթակա են տեխնոլոգիական և գործառնական ռիսկերի, որն իրենից ներկայացնում է Կառավարչի, նրա մատակարարների կամ նրան ծառայություն մատուցող կողմերի վերահսկողության ընթացակարգերում կամ տեխնոլոգիական համակարգերում առկա թերությունների արդյունքում հնարավոր կորուստները, որոնք սահմանափակում են տեղեկատվության հավաքագրման, մշակման և հաղորդակցման հնարավորությունը, իր սեփական, ինչպես նաև փայատերերի գործարքները արդյունավետ և անխափան իրականացնելու հնարավորությունը: Այս ռիսկը նաև ներառում է մարդկային սխալի, աշխատակիցների ոչ պատշաճ վարքագծի, համակարգչային վիրուսների, տեղեկատվական հարձակումների, ահաբեկչության, ինչպես նաև բնական աղետների ռիսկը:

Կառավարչի գործառնությունները մեծապես պայմանավորված են իր տեխնոլոգիական համակարգերի ամբողջական և անխափան գործունեությունից և հաջողության գրավականը մասնավորապես նաև կայանում է տեխնոլոգիաների ժամանակին բարելավումներով՝ հաշվի առնելով հաճախորդի հետզհետե փոփոխվող կարիքները: Ֆոնդի համակարգերի խափանումների, սխալների կամ անսարքության դեպքում, գործառնությունները կարող են զգալի բացասական ազդեցություն կրել: Գործունեության նման խափանումներից խուսափելու համար, Ֆոնդը վարում է կրկնօրինակման և տվյալների վերականգնման գործառույթներ, այդ թվում՝ տվյալների կրկնօրինակման և հաղորդակցության ապահովման միջոցներ, ինչպես նաև իրականացնում է աղետների դեպքում տվյալների վերականգնման ստուգումներ:

Գործառնական ռիսկը մեղմացնող հսկողական մեխանիզմներ մշակման և ներդրման համար առաջնահերթ պատասխանատվություն է կրում ղեկավար անձնակազմը: Կառավարիչն ունի տվյալների հետ աշխատանքի ստանդարտները կարգավորող քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք անդրադառնում են թե ներքին տեղեկատվությանը, աշխատակիցների անձնական տվյալներին, և թե ոչ հանրային սեփականություն հանդիսացող՝ հաճախորդի տվյալներին: Տվյալների անվտանգության գծով անցկացվում են կանոնավոր վերապատրաստումներ:

Անկախ ռիսկերի կառավարման աշխատանքներից, ոչ միշտ է հնարավոր կանխել կամ կանխարգելել տեխնոլոգիական կամ գործառնական գործընթացների խափանումները, ինչպես նաև կեղծիքի կամ այլ խեղաթյուրումների հավանականությունը, հետևաբար՝ Կառավարչի կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները ոչ բոլոր դեպքերում կարող են արդյունավետ լինել: Կառավարիչը և Ֆոնդը կարող են ենթարկվել դատական հայցերի, կրել վնասներ և կանոնակարգային պատժամիջոցների ենթարկվել, և կարող են ստիպված լինել բավականաչափ միջոցներ ներդնել խոցելի կետերը և այլ ռիսկերի արդյունքները մեղմելու և վերականգնելու ուղղությամբ:

Կարգավորման ռիսկեր: Որպես արժեթղթերի, ակտիվների կառավարման շուկայի մասնակից, Կառավարիչը ենթակա է կառավարական, վերահսկող մարմինների (մասնավորապես՝ ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության) կողմից կանոնակարգման: Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Կառավարիչը նաև ենթակա է կարգավորիչ կամ կարգավորման պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պատավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայատման ինչպես նաև կեղծիքից պաշտանվածության ընդհանուր դրույթներին:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ներդնեն փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում կանոնակարգային գործառույթները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են, և

պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ֆոնդի/Կառավարչի հանդեպ կիրառելիության շրջանակներում պետք է ապահովվի համապատասխանություն այդ կանոնակարգային պահանջների հետ:

Ղեկավարությունը զգալի ներդրում է կատարել իր գործունեությանն առնչվող տարաբնույթ իրավաբանական և կանոնակարգային/կարգավորման պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ: Չնայած օրենսդրական և կանոնակարգային/կարգավորման պահանջների հետ համապատասխանություն ապահովելու ուղղությամբ կատարված քայլերին, առկա են մի շարք ռիսկեր, մասնավորապես այն մասով, որ կանոնակարգային դաշտը կարող է լինել ոչ հստակ կամ կանոնակարգող մարմնի կողմից կարող են վերանայվել դրանց կիրառման ցուցումները: Կանոնակարգող մարմնի կողղմից Կառավարչի կամ դրա հետ փոխկապակցված անձանց, աշխատակիցների, պաշտոնատար անձանց հանդեպ ցանկացած հարկադրանք կարող է հանգեցնել տույժերի, տուգանքների, դադարեցման կամ չեղյալ հայտարարման հրամանների, հարկադիր գործողությունների, կասեցման կամ լիազորությունների դադարեցման, կամ այլ կարգապահական միջոցների գործադրմանը, ընդհուպ մինչև գործունեության սահմանափակումը: Նշվածներից ցանկացածի պարագայում Կառավարչի և Ֆոնդի վարկանիշը կարող է վնաս կրել և դա կարող է բացասաբար ազդել գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա: Պահանջների հետ համապատասխանության բացակայության արդյունքում կարող են կիրառվել զգալի դրամական և ոչ դրամական պատժամիջոցներ:

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

(հազար դրամ)	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ հաշիվներ բանկերում	410	1,364
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**410**	**1,364**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են մեկ ֆինանսական կազմակերպությունում՝ հաշվետու ամսաթվի դրությամբ կազմելով 3% (2014թ. դեկտեմբերի 31-ին՝ 13%) համակենտրոնացում զուտ ակտիվների գծով:

8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

(հազար դրամ)	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Պետական արժեթղթեր	6,400	5,242
Կորպորատիվ արժեթղթեր	6,345	4,186
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**12,745**	**9,428**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները ներառում են խոշոր հայկական կազմակերությունների արժեթղթեր և պետական արժեթղթեր (տես Ծան. 1): Այս գործիքներն իրենցից ներկայացնում են այն սահմանված ֆինանսական գործիքների մաս, որոնք համատեղ են կառավարվում Կառավարչի կողմից և ունեն կարճաժամկետ շահութաբերության վերջին միտումներ, կամ կազմում են ֆինանսական ակտիվների խմբի մաս, որոնք կառավարվում են և որոնց կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով՝ համաձայն Ֆոնդի փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության, և

տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով այդ հիմունքներով: Որպես այդպիսին այս ակտիվները սահմանվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ:

9. Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներ

Մի շարք փայերում տեղի ունեցող շարժը և փայատերերին վերագրելի զուտ ակտիվների շարժը հետևյալն է՝

(հազար դրամ)	2015թ.		2014թ.	
	Փայերի թիվը	(հազար դրամ)	Փայերի թիվը	(հազար դրամ)
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	8,961	10,776	3,631	4,156
Փայերի թողարկումը տարվա ընթացքում	1,348	1,655	5,330	6,247
Փայերի մարումը տարվա ընթացքում	(74)	(94)	-	-
Փայատերերին վերագրելի զուտ ակտիվների աճ	-	780	-	373
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,235**	**13,117**	**8,961**	**10,776**
Ակտիվների զուտ արժեքն ըստ փայերի (դրամով)		**1,282**		**1,203**

Փայերի գնում, մարում և բաշխում

Ֆոնդի փայերը առաջարկվում են մեկ փայի դիմաց դրա զուտ ակտիվների արժեքով յուրաքանչյուր գործառնական օր՝ համաձայն հաջորդ օրվա 03:00 դրությամբ հասանելի տեղեկատվության («զուտ ակտիվների արժեքի որոշման ժամ»): Աշխատանքային օրն այն օրն է, երբ ՀՀ կարգավորող շուկան բաց է: Փայերը կմարվեն զուտ ակտիվների այն արժեքով, որը կգործի զուտ ակտիվների արժեքի որոշման ժամի դրությամբ: Ֆոնդի կողմից ստացված ներդրումային եկամուտը կուտակվում և վերստին ներդրվում է Ֆոնդում և հաշվի է առնվում փայի արժեքը որոշելիս:

Փայատերերին վերագրելի զուտ ակտիվներն իրենցից ներկայացնում են պարտավորություններ՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և հաշվառվում են այն արժեքով, որը վճարման ենթակա կլիներ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ, եթե փայատերերը որոշեին օգտվել փայերի մարման իրավունքից (առանց մարման միջնորդավճարների և այլ ծախսերի, եթե այդպիսիք կան): Փայատերերն իրավունք ունեն ցանկացած աշխատանքային օր պահանջելու այն փայերի մարման իրավունք, որոնց ձեռքբերումից անցել է երկու տարվա ժամկետ և Ֆոնդը պարտավոր է բավարարել նման հայտը երեք օրվա ընթացքում:

Ֆոնդի կողմից 2015թ.հրապարակված վերջնական զուտ ակտիվների արժեքը, որով ֆոնդերի իրականացվել են փայերի վերջին թողարկումները և մարումները, կազմել ՝ 1,283.38 ՀՀ դրամ (2014թ՝ 1,196.18 ՀՀ դրամ):

10. Տոկոսային եկամուտ

(հազար դրամ)	2015թ.	2014թ.
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով տոկոսային եկամուտ		
-Պետական արժեթղթեր	780	480
-Կորպորատիվ արժեթղթեր	449	273
Ընդամենը տոկոսային եկամուտ	**1,229**	**753**

11. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ վնաս

(հազար դրամ)	2015թ.	2014թ.
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ (վնաս)/օգուտ		
-Պետական արժեթղթեր	(198)	(473)
-Կորպորատիվ արժեթղթեր	(8)	262
Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով զուտ վնաս	**(206)**	**(211)**

12. Գործարքներ կառավարչի և այլ կապակցված կողմերի հետ

ա. Կառավարչի պարգևավճար

Կառավարիչն իրավունք ունի ստանալ պարգևավճար տարեկան ֆոնդի ակտիվների զուտ արժեքի 1.8%-ի չափով՝ հաշվարկված և հաշվեգրված յուրաքանչյուր գործառնական օրվա համար, որը ենթակա է վճարման ամսական մասնակի մարումների տեսքով: Ֆոնդի գծով Կառավարչի պարգևավճարի չափը կազմում է տարեկան 1.8%: Հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկված կառավարչի պարգևավճարը կազմում էր 213 հազար դրամ (2014թ.՝ 150 հազար դրամ), որից 19 հազար դրամը ենթակա էր վճարման 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 12 հազար դրամը):

Ֆոնդի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի դիմաց վճարումը 2015թ. և 2014թ. համար կատարվել է Կառավարչի կողմից:

բ. Կառավարչի մասնակցությունը Ֆոնդում

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Կառավարչին էր պատկանում ֆոնդի 1,000 փայ, (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1000 փայ) ինչը կազմում է տվյալ ամսաթվի դրությամբ մարման ենթակա փայերի 9.77% (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 11.6%):

13. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Ֆոնդի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և բացահայտումները պահանջում են որ իրական արժեքը որոշվի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների համար: ՖՀՄՍ-ի սահմանմամբ, Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև չափման ամսաթվի դրությամբ սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս:

Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին: Որոշակի այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ղեկավարությունն օգտագործում է ստորև նկարագրված մեթոդները՝ դրանց չափման և բացահայտման նպատակով: Կիրառելի լինելու դեպքում, տվյալ ակտիվի կամ պարտավորության գծով ծանոթագրություններում բացահայտվում է իրական արժեքի որոշման համար օգտագործված լրացուցիչ տեղեկատվություն, սակայն, հաշվի առնելով սուբյեկտիվ դատողությունը և անորոշությունները, իրական արժեքը չպետք է համարվի անմիջապես իրացվելի՝ ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման պահին:

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					
ՀՀ պետական և կառավարական պարտքային արժեթղթեր	6,400	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր Զեղչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված՝ պարտքային արժեղթղերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված պետական եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 10.46% - 15.79% միջակայքում	Կ/չ	Կ/չ
Կորպորատիվ և միջազգային կազմակերպությունների պարտքային արժեթղթեր	6,345	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված՝ պարտքային արժեղթղերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ տվյալ գործիքի համար: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 8.45% - 11.6% միջակայքում:	Կ/չ	Կ/չ
	12,745	**-**	**-**	**-**	**-**

Ֆինանսական ակտիվներ/ ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հազար դրամով	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերա-կցությունը իրական արժեքին
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					
ՀՀ պետական և կառավարական պարտքային արժեթղթեր	5,242	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր Զեղչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված՝ պարտքային արժեղթղերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված պետական եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 8.78% - 14.42% միջակայքում:	Կ/չ	Կ/չ
Կորպորատիվ և միջազգային կազմակերպությունների պարտքային արժեթղթեր	4,186	Մակարդակ 2	Զեղչված դրամական հոսքեր՝ հիմնված պայմանագրով ամրագրված՝ պարտքային արժեղթղերի պայմանների վրա և ակտիվ շուկայում գնանշված եկամտաբերության կորը հաշվետու ամսաթվի դրությամբ տվյալ գործիքի համար: Կիրառված եկամտաբերության կորը տատանվում էր 8.45% - 11.6% միջակայքում:	Կ/չ	Կ/չ
	9,428	**-**	**-**	**-**	**-**

Ֆինանսական ակտիվների դասակարգման ընթացքում Ղեկավարությունը հիմնվում է սեփական դատողությունների վրա՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Գնահատման էականությունը որոշելիս հիմք է ընդունվում իրական արժեքով ամբողջությամբ չափումը:

2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածի դրությամբ մակարդակ 1-ից դեպի մակարդակ 2 և հակառակը փոխանցումներ տեղի չեն ունեցել: